ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Սկզբնաղբյուրների քննությունը հիմք է տալիս հին Հայաստանում պետական ապարատի կազմավորման և զարգացման գործընթացը բաժանել երեք հիմնական փուլի. 1) ներքին համախմբման և կազմակերպման փուլ (Երվանդունիների թագավորության շրջան և Արտաշեսյան թագավորության հաստատումից մինչև Տիգրան II-ի գահակալում)։ 2) Արտաքին ծավալման և ներքին կատարելագործման փուլ (Տիգրանից մինչև Հայաստանում Արշակունիների հաստատումը)։ 3) Հելլենիստական ստրկատիրական պետական ապարատի՝ ավատատիրականի վերասերման փուլ (հայ Արշակունյաց թագավորության ամբողջ ժամանակաշրջանը)։

Այդ երեք փուլերի համար ընդհանուրն այն է, որ պետական իշխանության դլուխ կանգնած է եղել ինքը՝ թագավորը։ Առաջին փուլի մասին պահպանված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում դեռևս չէր ստեղծվել այնպիսի զարգացած ու ճյուղավորված պետական ապարատ, ինչպիսին առաջացավ Տիգրան II-ի աշխարհակալությունից հետո և Արշակունիների գահակալության տարիներին։ Այնուամենայնիվ, Երվանդունիների օրոք Հայաստանում արդեն գոյություն ուներ իշխանության ինչ-որ բաժանում։ Թագավորի հետ երկրի կառավարմանը մասնակցել են նաև քրմերը։ Հավանաբար, այդ փուլում հայոց թագավորի կողքին եղել է նրա իշխանությունը ինչ-որ չափով սահմանափակող ավագանու խորհուրդը, որը, Քսենոփոնի վկայությամբ, գոյություն ուներ դեռևս Աքեմենյանների կողմից Հայաստանի նվաճումից առաջ։ Հույն պատմիչը նրանց անվանում է «պատվավոր արմեններ»[1]։

Երվանդունիների թագավորության ժամանակ Հայաստանում հազիվ թե ստեղծված լիներ զարգացած վարչապետական ապարատ, քանզի նրանց տերության սահմանները զգալիորեն կրճատվել էին։ Նրանց իշխանությունից դուրս էին գտնվում Փոքր Հայքը, Ծոփքը, Կոմմագենեն։ Մի շարք շրջաններ նվաճել էին Սելևկյանները. որոշ գավառներ գտնվում էին հարևան իբերների, մեդացիների և այլոց ձեռքին[2]։ Այդ գավառները հետագայում Արտաշեսն ու Զարեհը վերամիավորեցին իրենց տերության մեջ[3]։ Երվանդյան Հայաստանի տարածքային կրճատումները չէին կարող բացասաբար չանդրադառնալ նոր կազմավորվող հայոց պետական ապարատի զարգացման վրա։

Հայոց պետականության կազմավորման և հետագա ներքին զարգացման փուլը հիմնականում ավարտվում է Արտաշես I-ի թագավորության օրոք։ Այն պայմանավորված էր ոչ միայն երկրի ներքին, սոցիալ-տնտեսական զարգացմամբ, այլև մի շարք ներքին և արտաքին քաղաքական հանգամանքներով։

Արտաշեսն ընդարձակեց Արաքսի հովտում պարփակված թագավորության սահմանները, նրան միացնելով Հայկական լեռնաշխարհի ծայրամա-

---

[1] Xenophontis Cyropaedia III. 1, 8

[2] Г. А. Тирацян. Страна Коммагена и Армения.— ՀԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3, էջ 73։ Գ. Ա. Տիրացյան. Երվանդունիները Հայաստանում.—Նույն տեղում, 1958, № 6, էջ 66։

[3] Strabo, XI, 14, 5.

սային գավառները[4], որով, ինչպես վկայում է Պոլիբիոսը, Արտաշեսը դառնում է Հայաստանի մեծաղույն մասի տիրակալ[5]։ Մեկ միասնական պետության կազմում ընդգրկված Հայկական լեռնաշխարհում՝ բնակվող ցեղերի կյանքում կատարվեց պատմական կարևորագույն իրադարձություն՝ բոլորը միալեզու դարձան։ Ստեղծվեց էթնիկ միաձույլ ամբողջություն ներկայացնող պետական միավորում։

Անցնելով միասնական պետության գլուխ, Արտաշեսը պիտի ձեռնամուխ լիներ վարչա-պետական նոր ապարատի ստեղծմանը։ Այդ ուղղությամբ նրա ձեռնարկած միջոցառումների մասին ուղղակի տվյալներ չկան։ Ուստի մենք կդիմենք անուղղակի տվյալների և հելլենիստական երկրներից հայտնի օրինակներին։ Կարևոր է այն փաստը, որ Արտաշեսը նախկինում եղել էր Սելևկյան Անտիոքոս III-ի նշանակած ստրատեգոսը Հայաստանի մի մասի վրա։ Անտիոքոսի ժամանակ ստրատեգոսն արդեն ոչ միայն զինվորական, այլև վարչաքաղաքական պաշտոն էր, նույնական մարզի կառավարչի պաշտոնին[6]։

Արտաշեսը, որպես Սելևկյանների ստրատեգոս, մոտ էր կանգնած Անտիոքոսի արքունիքին և լավ ծանոթ էր հելլենիստական այդ խոշոր տերության պետական ապարատին։ Հայոց թագավոր դառնալով, նա, իր պետության վարչապետական ապարատի ստեղծմանը ձեռնարկելիս, առաջին հերթին պիտի նկատի ունենար Սելևկյանների պետական հաստատությունները։

Արտաշեսը միաժամանակ պիտի հաշվի առներ նաև Հայաստանում ստեղծված պատմական առկա պայմանները, շատ բանով տարբեր Սելևկյանների մոտ տիրող պայմաններից։ Կար երկու էական տարբերություն. ա) Հայոց պետության տարածքն անհամեմատ փոքր էր Սելևկյանների տերության տարածքից. բ) Սելևկյանների տերությունն ընդգրկում էր տարբեր ցեղերով ու ժողովուրդներով բնակեցված երկրամասեր և չուներ էթնիկ այն միասնությունը, որին արդեն հասել էր «միալեզու» դարձած Հայաստանը։

Արտաշեսի օրոք Մեծ Հայքի թագավորությունն ընդգրկում էր հայկական էթնոսով բնակեցված գրեթե բոլոր մարզերը։ Անհրաժեշտ էր ձեռնարկել երկիրը վարչատարածքային բաժանման ենթարկող բարենորոգումներ։ Այս մասին աղբյուրներում չկան որոշակի տվյալներ։ Խորենացին թեև խոսում է Արտաշեսի բարենորոգումների մասին, բայց դրանք տեղադրում է I դարում, ուստիև այդ ամենն ընկալվում է իբրև շարունակություն Վաղարշակի ձեռնարկած միջոցառումների[7]։

Առանձին ուշադրության է արժանի Պլինիոս Ավագի այն հաղորդումը, թե Հայաստանը «բաժանված է պրեֆեկտուրաների, որոնք կոչվում են ստրատեգիաներ, որոնցից մի քանիսը հնում եղել են թագավորություններ։ Դրանք 120 են և ունեն բարբարոսական անվանումներ»[8]։

Ն. Ադոնցը գտնում է, թե Պլինիոսի այս հաղորդումը արտացոլում է Տրդատ I-ի ժամանակաշրջանը[9]։ Գ. Սարգսյանը ենթադրում է, որ Հայաստանի բաժանումը ստրատեգիաների կատարվել է Արտաշեսյանների, գուցեև իր՝ Արտաշեսի ժամանակ[10]։ Նա իր տեսակետը հիմնավորելու համար մշում է մի շարք համոզիչ փաստարկներ։ Դրանց մենք կավելացնեինք այն, որ Պլինիոսի՝ լատիներեն գրված այս երկում ստրատեգիա (στρατηγία) բառը գրր-

---

4 Նույն տեղում։

5 Polybii Historiae, XXVI, 6 1—12.

6 Գ. Ա. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի մ. թ. ա. III—II դդ. պատմության մասին.—«Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 21—23։

7 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, Բ, խէ—ծթ։

8 C. Plinii Secundi Naturalis Historiae. Paris, 1883, VI, 10.

9 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 391—392.

10 Գ. Խ. Սարգսյան. Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին. Երևան, 1962, էջ 7—9։ Հայ ժողովրդի պատմություն. հ. Ա, Երևան, 1971, էջ 678—679 և 839—840։

ված է հունարեն տառերով։ Այս փաստը մեզ մղում է երկու ենթադրության։ Առաջին, որ Պլինիոսը չի գտել այդ բառի լատիներեն համարժեքը. երկրորդ, որ նա այդ տեղեկությունը քաղել է իրենից (ասել է թե՝ Տրդատի գահակալումից) առաջ հեղինակած մի հույն պատմիչի երկից։ Ուստի մենք ևս հավանական ենք համարում Գ. Սարգսյանի կարծիքը, դրա համար որոշակի հիմքեր տեսնելով իրենց իսկ՝ Ստրաբոնի և Պլինիոսի հաղորդումներում։

Ստրաբոնը, թվարկելով Արտաշեսի ջանքերով հայոց թագավորության տարածքին վերամիավորված մարզերը, տալիս է հայկական մեկ տասնյակ գավառների անուններ (Կասպիանե, Փավնիտիս, Քորզենե, Գոգարենե, Ակիլիսենե, Կարենիտիս և այլն)[11]։ Սրանցից յուրաքանչյուրը, հավանաբար, նաև ստրատեգիաներից մեկի անվանում էր, քանի որ Պլինիոսը նշելով, թե Հայաստանի ստրատեգիաները կրում են բարբարոսական անվանումներ, տալիս է դրանցից մեկի անունը՝ Caranitis[12], որն, անկասկած Ստրաբոնի հիշատակած նույն Կարենիտիսն է՝ հայկական Կարինը։

Ստրաբոնի և Պլինիոսի հաղորդումներում հիշատակված տեղանունները հիմք են տալիս ենթադրելու, որ վարչատարածքային առումով Հայաստանի ստրատեգիաների սահմանները համընկնում էին հայրենի լեռնաշխարհի ներքին կտրվածքով և էթնիկ տարաբնակեցմամբ պայմանավորված ստորաբաժանումներին։ Դրանց կառավարիչները եղել են պետական պաշտոնյաներ, որոնց նշանակել է հայոց թագավորը իր մերձավորագույն շրջապատի մարդկանցից։

Անտիկ հեղինակների երկերում առավել շատ տեղեկություններ կան Տիգրան Մեծի թագավորության տարիների Հայաստանի մասին։

Մի կողմից, հենվելով երկրի ներքին զարգացման հետևանքով կուտակված միջոցների վրա, մյուս կողմից, օգտվելով միջազգային բարենպաստ պայմաններից, Տիգրանը ձեռնամուխ եղավ իր տերության սահմաններն ընդարձակելու գործին։ Նա բարեհաջող վախճանի հասցրեց Արտաշեսի սկսած պայքարը՝ Ծոփքը ևս Մեծ Հայքի թագավորությանը միացնելու համար[13]։ Հայ էթնոսով բնակեցված միակ երկրամասը, որը դուրս մնաց Տիգրան II-ի տիրապետությունից, Փոքր Հայքն էր, որն արդեն մ.թ.ա. II դարի վերջին Միհրդատ Պոնտացին միացրել էր իր տերությանը։ Այդ հզոր հարևանի և ապագա դաշնակցի հետ հարաբերությունները չսրելու համար, Տիգրանին մնում էր հաշտվել կատարված փաստի հետ։ Ավելի ուշ Փոքր Հայքը անցավ Հռոմի գերիշխանության տակ։ Այսպիսով, հնագույն ժամանակներից հայ էթնոսով բնակեցված այդ երկրամասը, պատմական դաժան հանգամանքների բերումով, չմտավ միացյալ հայկական թագավորության սահմանների մեջ։

Իրեն արդեն բավականաչափ ամուր զգալով գահի վրա, Տիգրանը կարող էր ձեռնամուխ լինել արտաքին նվաճումների։ Սակայն դրա համար անհրաժեշտ էին նյութական միջոցներ, որոնք նա, Միհրդատի հետ դաշնակցած, ձեռք բերեց Կապադովկիայի վրա արշավելով[14]։ Տիգրանի արշավանքը Կապադովկիա միաժամանակ նպատակ ուներ իր թիկունքն ապահովել պարթևների դեմ արշավանքի նախօրյակին։ Այս վերջին արշավանքի ամենամերձավոր նպատակն էր՝ ետ նվաճել պարթևներից այն 30 հովիտները, որ Տիգրանն իբրև փրկագին զիջել էր պարթևներին, Հայաստանի գահը ստանալու համար[15]։

Տիգրանը, օգտվելով պարթևների թուլացումից, նվաճեց նաև Ատրպատականը և Գորդիենեն։ Մինչ այդ պարթև թագավորին հպատակ այդ երկրների թագավորները հարկադրված ճանաչեցին Տիգրանի գերիշխանությունը։ Հ. Մանանդյանը նշում է, որ այս առթիվ էլ պարթևների թագավո-

---

[11] S t r a b o, XI, 14, 5.

[12] C. Plinii Nat. Hist., V, 20.

[13] S t r a b o, XI, 14, 15.

[14] *Նույն տեղում*, XII, 2, 9: Appiani Mithridatica, X.

[15] S t r a b o, XI, 14, 15.

րը ստիպված եղավ, հօգուտ հայոց թագավորի, հրաժարվելու «արքայից արքա» տիտղոսից[16]։ Մեր կարծիքով, հայոց թագավորի այս նոր տիտղոսը ոչ այնքան հետևանք էր պարթևների դեմ Տիգրանի տարած հաղթանակի, որքան փաստացի այն դրության, երբ նրան հպատակ էին արդեն մի շարք երկրների թագավորներ[17], ինչը շեշտված է Ապպիանոսի մի վկայության մեջ, թե՝ Տիգրանը, հպատակեցնելով իրենց սեփական իշխանավորներին ունեցող մի շարք հարևան ազգերի, հռչակվեց արքայից արքա[18]։

Այնուհետև Տիգրանն իր ուշադրությունը բևեռեց երբեմնի հզոր հելլենիստական տերության՝ նախկինում Հայաստանի սյուզերեն, բայց արդեն խորը քաղաքական ճգնաժամ ապրող Սելևկյանների տերությունը նվաճելու վրա։ Մագնեսիայի ճակատամարտում կրած պարտությունից հետո, այդ տերության արագ քայքայումը ավելի ու ավելի խանգարում էր առևտրական նորմալ հարաբերություններին Առաջավոր Ասիայում, ինչը խիստ հարվածում էր Արևելքի հելլենիստական վաճառաշահ քաղաքների շահերին։ Ասորիքի նվաճումը անհրաժեշտ էր Տիգրանին հատկապես Մերձավոր Արևելքի քարավանային ուղիների վերահսկողությունն իր ձեռքը վերցնելու և դեպի Միջերկրական ելք ապահովելու համար։ Մ. թ. ա. 84-ին արշավելով, Տիգրանը նվաճում է Ասորիքը՝ Անտիոք մայրաքաղաքով, Փյունիկիան և Դաշտային Կիլիկիան։

Նվաճումների հետևանքով աշխարհակալ տերություն դարձած հայկական պետությունը չէր կարելի կառավարել նախկին եղանակներով։ Եթե մինչ այդ Հայաստանը առավել կամ պակաս չափով միատարր տնտեսական և էթնիկ ամբողջություն էր ներկայացնում, ապա Տիգրանի նվաճումներով խախտվեց այդ միատարրությունը։ Տիգրանի տերությունն արդ ուներ գրեթե նույն պատկերը, ինչ երբեմնի Աքեմենյանների և Սելևկյանների, տնտեսապես և էթնիկապես խայտաբղետ, տերությունները։ Նրա գերիշխանության տակ անցան մի կողմից բարձր զարգացման հասած Ասորիքի և Փյունիկիայի վաճառաշահ կենտրոններ, մյուս կողմից արաբական անապատների վաչկատուն ցեղեր. վաղուց իրենց պետականությունն ստեղծած Կապադովկիայի և Ատրպատականի կողքին դեռևս տոհմատիրական կարգերում ապրող աղվանական ցեղեր, մանր թագավորություններ և ինքնավար քաղաքներ։ Ուստի Տիգրանը պարտավոր էր կառավարչական որոշակի բարեփոխություններ կատարել։

Տիգրանն այդ երկրների մի մասի կառավարումը, Սելևկյանների օրինակով, թողեց դրանց նախկին տիրակալների ձեռքին, որոնք այժմ համարվում էին հայոց թագավորի հպատակներ, ինչպես Գորդիենեի թագավոր Զարբիենոսը, Ատրպատականի թագավոր Միհրդատը, Կոմմագենեի թագավոր Անտիոքոսը, Խալկիսի թագավոր Մեննայոսը և Ադիաբենեի թագավորը։ Բացի հպատակության տարեկան հարկ վճարելուց, նրանք պարտավոր էին պատերազմի ժամանակ Տիգրանին զորք տրամադրել։

Նվաճված երկրների մեջ կային և այնպիսիք (Կիլիկիա, Միջագետք), որոնք վաղուց կորցրած լինելով իրենց ինքնուրույն պետականությունը, կառավարվում էին Սելևկյան թագավորի կարգած ստրատեգոսների միջոցով։ Այդ երկրներում Տիգրանը նոր վարչաձև չմտցրեց։ Նա հետևեց Սելևկյանների օրինակին, որպես կառավարիչ այնտեղ կարգելով իր մերձավորներին։ Միջագետքի կառավարումը նա հանձնեց իր եղբայր Գուրասին, Մծբին նստավայրով[19]։ Նույն կերպ վարվեց նա Սելևկյանների թագավորության կորիզի՝ Ասորիքի հետ։ Այստեղ Տիգրանը ստրատեգոս-կառավարիչ կարգեց Բագադատեսին, որին Մարկվարտը և Ադոնցը համարում են Բագրատունիների տոհ-

---

16 Հ. Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Ա, Երևան, 1944, էջ 148—151։

17 Ս. Մ. Կրկյաշարյան. Բդեշխությունների առաջացումը Հայաստանում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 259—260։

18 Appiani Syriaca, XLVIII.

19 Plutarchi Vitae parallelae, Lucullus, XXVI, 6.

մապետ[20]. Դաշտային Կիլիկիան ևս, վարչականորեն միացվելով Ասորիքին, հանձնվել էր նույն Բագդատեսի կառավարմանը։ Այժմ արդեն Տիգրանի նվաճած երկրների թագավորներն ու նոր նշանակված ստրատեգոս-կառավարիչները հայոց թագավորի հանդեպ ունեին հպատակության նույնպիսի հարաբերություններ, ինչ նախկինում Արտաշեսյան թագավորության հիմնադիր ստրատեգոս Արտաշեսը, ինչպես և այդ նույն երկրների տիրակալները ունեին մինչ այդ դեպի Սելևկյան թագավորը։ Այս իրադրությունը լավագույնս արտահայտել է Խորենացին՝ գրելով, թե Տիգրանը «արանց գլուխ կացեալ և արութիւն ցուցեալ զազգս մեր բարձրացոյց և զընդ լծովն կացեալս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց»[21]։

Սելևկյան պետության օրինակով ստեղծված ստրատեգոս-կառավարչի պաշտոնը Տիգրան Մեծի տերության մեջ չէր կարող ժառանգական բնույթ ունենալ, քանզի, պայմանավորված լինելով արտաքին նվաճումների միջոցով երկրի տարածքի աննախադեպ ընդարձակումով, այն չէր կարող առաջանալ Տիգրանի գահակալմանը նախորդած փուլում, երբ հայկական պետությունը դեռևս պարփակված էր ավելի նեղ շրջանակներում, քան երկրի բնական-աշխարհագրական սահմաններն էին։ Ստրատեգոսի, որպես առանձին մարզի կառավարչի պաշտոնի համար Հայաստանում պայմաններ ստեղծվեցին միայն Տիգրանի նվաճումներից հետո։ Հետևաբար, նվաճված երկրների կորուստով էլ պիտի վերանային այդ երկրներում հայոց թագավորի նշանակած կառավարիչների պաշտոնները։ Ուստի դժվար է համաձայնվել Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի հետ, որոնք նախարարությունների, որպես ժառանգական հողատիրության հետ կապված պետական պաշտոնների, առաջացումը Հայաստանում դնում են Արտաշեսի կամ Տիգրանի թագավորության ժամանակ[22]։ Նախարարությունները, որպես ժառանգական պաշտոններ, առաջացել են, անկասկած, ավելի ուշ, հայ Արշակունիների թագավորության շրջանում։

Պետական կազմակերպության կարևորագույն կառույցներից մեկը եղել է զորքը։ Հայոց զորքի և նրա ինքնուրույն ռազմական գործողությունների մասին առավել հավաստի տեղեկություններ ունենք Տիգրան II-ի թագավորության ժամանակաշրջանի վերաբերյալ։ Պատմահայրը հայկական պետական հաստատությունների և հայոց բանակի կազմակերպումը վերագրում է Վաղարշակ Արշակունուն, բայց կասկածից վեր է, որ Տիգրանը մեծ վերափոխումներ ձեռնարկեց հայոց բանակի վերակազմության ուղղությամբ։ Այդ վերափոխությունների էության մասին որոշ պատկերացում տալիս է Խորենացին, գրելով, թե այդ ժամանակ «հետեւակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթօք պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել»[23]։

Արևելքի մյուս երկրների նման, Հայաստանում ևս զորքերի գլխավոր հրամանատարը ինքը թագավորն էր։ Բայց ոչ բոլոր ռազմական արշավանքների ժամանակ հայոց թագավորը անձամբ առաջնորդում էր զորքը։ Այսպես, Ապպիանոսը[24] հաղորդում է, որ Տիգրանի զորավարներից Միթրաասը և Բագոասը ուղարկվեցին Կապադովկիան նվաճելու համար։ Մեկ ուրիշ առիթով

---

[20] J. Markwart. Eran'sahr nach der Geographie des Pseudo Moses Chorenaci. Berlin, 1901. S. 174; Н. Адонц. Указ. соч., с. 411—413.

[21] Մովսես Խորենացի, Ա, իդ։

[22] Н. Адонц. Указ. соч., с. 211—212; Հ. Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում. Երևան, 1934, էջ 10։

[23] Մովսես Խորենացի, Բ, զ։

[24] Appiani Mithr., X.

Ապպիանոսը[25] խոսում է Տիգրանի Բագադատես զորավարի մասին, որին զորքի մի մասով ուղարկել էր նվաճելու Կոմմագենի թագավորությունը և դաշտային Կիլիկիան, մինչ ինքը զբաղված էր Փյունիկիա արշավելով: Նույն Բագադատեսն էր 69 թ., Լուկուլլոսի արշավանքի ժամանակ, զորքով Կիլիկիայից օգնության շտապել անակնկալ հարձակման ենթարկված Տիգրանին:

Տիգրան II-ի մեկ այլ զորապետին՝ Մեհրուժանին, անակնկալի եկած հայոց թագավորը 2000 հեծյալով ուղարկում է Լուկուլլոսի դեմ, նրա առաջընթացը կասեցնելու համար[26]: Այս հեծելազորի, ինչպես նաև Սելևկյանների արքունի հեծելազորի մասին եղած տեղեկությունների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս որոշ չափով պարզելու Մեհրուժանի պաշտոնի և նրա գլխավորած հեծելազորի էությունը:

Սելևկյանների իշխանության կարևոր հենարանը նրանց խայտաբղետ, բայց պատկառելի ուժ ներկայացնող հսկայական բանակն էր, հիմնականում կազմված հետևակից և հեծյալներից[27]: Հետևակի ամենակարևոր մասը մակեդոնական փաղանգն էր, որի հարվածային ուժը պեզետերոյ կոչված գունդն էր: Այն բաղկացած է եղել վեց հազար ծանրազեն հետևակից և կազմել է թագավորի թիկնապահ զորքը: Հետևակի շարքերում, բացի ծանրազեն հոպլիտներից, կռվում էին նաև թեթևազեն աղեղնավորներ և պարսատիկավորներ[28]:

Բացի հեծելազորի մի գնդից, որի մասին կխոսվի ստորև, ինչպես նաև բերդերում տեղակայված կայազորներից, Սելևկյանների բանակը, ըստ երևույթին, մշտական չէր, այլ ամեն անգամ հավաքագրվում էր պատերազմի ժամանակ: Հայոց թագավորը ևս, Սելևկյանների նման, չի ունեցել մշտական բանակ:

Հելլենիստական թագավորների կայազորները հաճախ տեղակայված էին լինում ոչ միայն բերդերում և ամրոցներում, այլև թագավորին ենթակա քաղաքներում: Դրանով, մի կողմից, թագավորի տրամադրության տակ լինում էր որոշ քանակությամբ մշտական զորք, մյուս կողմից, սահմանափակվում էր քաղաքի ինքնավարությունը և ուժեղանում նրա ենթակայությունը թագավորական իշխանությանը: Սելևկյանների այս խայտաբղետ բանակում, սակայն, ամենակարևոր դերը խաղում էր հեծելազորային այն գունդը, որը հայտնի է ագեմա կամ արքունի հեծելագունդ անունով[29]:

Մենք համառոտակի ուրվագծեցինք Սելևկյանների բանակի կազմակերպման պատկերը, քանի որ, կարծում ենք, հելլենիստական այդ խոշոր տերության բանակը այն հիմնական սկզբնօրինակն էր, որին հետևեց հայոց թագավորը՝ վճռական մարտերից առաջ իր բանակը կազմակերպելիս:

Հայաստանում ևս բանակի գլխավոր հարվածային կորիզը թագավորի թիկնապահ հեծելազորն էր: Տիգրանի, Արտավազդի և Տրդատ I-ի թիկնապահ հեծելազորի մասին կան անտիկ պատմիչների մի շարք հիշատակումներ: Պլուտարքոսը գրում է. «Առաջինը Տիգրանի ընկերներից Մեհրուժանը համարձակվեց ճշմարտությունը հաղորդել... Սա իսկույն ուղարկվեց Լուկուլլոսի դեմ 3000 հեծյալով և բազմաթիվ հետևակով»[30]: Ապպիանոսը գրում է. «Տիգրանը Մեհրուժանին ուղարկեց 2000 հեծյալով, որպեսզի խափանի Լուկուլլոսի ճանապարհը»[31]: Պլուտարքոսը դարձյալ գրում է. «Կրասսոսին սրբտապնդեց հատկապես Արտավազդ Արմենի ժամանումը: Սա եկավ 6000 հեծյալով: Իսկ սրանք... միայն թագավորի թիկնապահներն էին և ուղեկցնե-

---

25 Նույն տեղում, XLVIII:

26 Նույն տեղում, LXXXIV:

27 E Bickermann. Institutions des Seleucides. Paris, 1938, p. 52–60.

28 Polybii Historiae, V, 53, 9.

29 Polybii Historiae, V. 85, 12; VII, 16, 2.

30 Plutarchi Lucullus, XXV, 3.

31 Appiani Mithr., LXXXIV.

ը»[32]: Մի վկայություն էլ Տրդատ I-ի թիկնապահ հեծելազորի մասին։ Ներոն կայսեր ձեռքից Հայաստանի թագը ստանալու նպատակով Տրդատի Հռոմ կատարած ճանապարհորդությունը և այնտեղ նրան ցույց տրված շքեղ ընդունելությունը մանրամասն նկարագրել է Դիոն Կասսիոսը։ Նա հաղորդում է, որ Տրդատն ուղևորվելիս իր հետ վերցրել էր իր կնոջը և երեխաներին, իր եղբայրների՝ Ատրպատականի թագավոր Պակորոսի և Ադիաբենեի թագավոր Մոնոբազոսի որդիներին։ Հայոց արքային ուղեկցում էր 3000 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած մի շքախումբ[33]։

Այս հատվածներում հիշատակված հայոց թագավորի թիկնապահ հեծելազունդը, անկասկած, համապատասխանում էր Սելևկյանների մակեդոնական ագեմային։ Հայոց այդ հեծելազունդը իր սոցիալական կազմով ևս համապատասխան պիտի լիներ ագեմային, որը կազմված էր Սելևկյան թագավորի մերձավորներից։ Անտիկ պատմիչների վկայություններից հետևում է, որ հայկական թիկնապահ հեծելազունդը ևս կազմված էր թագավորի մերձավորներից։ Ուստի, հայոց թագավորի թիկնապահ գնդի և նրա հրամանատարի դերը երկրի քաղաքական կյանքում նույնքան կարևոր էր, ինչքան ագեմայի և նրա հրամանատարի դերը Սելևկյան պետության մեջ։

Այս գրությունն էլ արձանագրված ենք տեսնում Խորենացու մոտ։ Պատմելով Վաղարշակի կողմից Հայաստանում արքունի գործակալությունների՝ նախարարությունների հաստատման մասին, նա գրում է, որ թագավորը կարգում է «թիկնապահս իւր,... ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս, և գլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր բարի և սրտեայ»[34]։ Մաղխազը գլխավորում էր արքունի թիկնապահների գունդը և նրա վարած պաշտոնը կոչվում էր «Մաղխազութիւն», որը հին Հայաստանում կարևորագույն վեց գործակալություններից (թագակալ ասպետություն, հազարապետություն, մարդպետություն, մաղխազություն, սպարապետություն, մեծ դատավորություն) մեկն էր։

Սելևկյանների մակեդոնական ագեմայի և հայոց թագավորի թիկնապահ հեծելազնդի ոչ միայն սոցիալական դերն ու դիրքն էր համընկնում, այլև դրանց թվական կազմը։ Ըստ Պոլիբիոսի և Ապպիանոսի, Սելևկյանների ագեման բաղկացած էր 2000 հեծյալից։ Վերոբերյալ տվյալների համաձայն, հայոց արքայի թիկնապահ հեծելագունդը հաշվվում էր 2000, 3000 և 6000։ Առաջին հայացքից թվում է, թե այդ գնդի թիվը Հայաստանում տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ 2000-ից մինչև 6000։ Սակայն աղբյուրների մանրակրկիտ վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ հայկական թիկնապահ գունդը ևս, Սելևկյան ագեմայի նման, բաղկացած է եղել 2000 հեծյալից։

Պլուտարքոսը պատմում է, թե Տիգրանը Մեհրուժանին ուղարկեց Լուկուլլոսի դեմ 3000 հեծյալով և մեծաթիվ հետևակով։ Հ. Մանանդյանը Պլուտարքոսի մի շարք վկայություններ հիրավի համարում է միտումնավոր ու չափազանցված։ Ենթադրելի է, որ Մեհրուժանին հանձնված հեծելազորի թվի և հետևակի մասին Պլուտարքոսի այս հաղորդումը ևս վստահելի չէ։

Մեկ այլ առիթով մենք ցույց ենք տվել, որ Լուկուլլոսի հարձակման ժամանակ Տիգրանը գտնվում էր Պաղեստինում և, լսելով Լուկուլլոսի ներխուժման մասին, շտապ ուղարկել էր իր թիկնապահ հեծելագունդը Մեհրուժանի գլխավորությամբ, Լուկուլլոսի առաջընթացը կասեցնելու համար[35]։ Տիգրանը Մեհրուժանին չէր կարող հանձնած լինել նաև հետևակ, քանի որ այն միայն կխանգարեր հեծելազնդի արագ ընթացքին։

---

32 Plutarchi Crassus. XIX, 1—2.

33 Dionis Cassii Historia Romana, LXIII, 1—7.

34 Մովսես Խորենացի, Բ, է։

35 Ս. Մ. Երկյաշարյան. Տիգրան II-ին վերաբերող մի կարևոր ուղղում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 275—278։

Ինչ վերաբերում է Պլուտարքոսի հաղորդմանը, թե Արտավազդը Կրասսոսի մոտ ժամանել էր 6000 թիկնապահներով, ապա այն ոչ լիովին է համապատասխանում իրականությանը։ Անկասկած, մինչև Ասորիք ճանապարհվող հայոց թագավորին պիտի ուղեկցեր նրա թիկնապահ հեծելագունդը, հիմնականում բաղկացած 2000 հեծյալից։ Արտավազդը, անտարակույս, ռազմական անհրաժեշտ պատրաստություն էր տեսել, դիմագրավելու և՛ հռոմայեցիների, և՛ պարթևների հավանական հարձակումները։ Հետևաբար, և՛ անձնական ապահովության, և՛ իր ուժը ցուցադրելու համար, նա, բացի իր թիկնապահ հեծելագնդից, իր հետ վերցրել էր նաև մի քանի հազար այլ հեծյալների, որով իրեն ուղեկցող զորագնդի ընդհանուր թիվը հասել էր վեց հազարի։ Իսկ հռոմայեցիներն այդ ամբողջությամբ ընկալել էին որպես թագավորի թիկնապահ զորք։

Երկու խոսք Հռոմ ուղևորված Տրդատ Արշակունուն ուղեկցող երեք հազարանոց հեծյալ շքախմբի մասին։ Այն խայտաբղետ է եղել։ Դրա հիմնական կորիզը, անկասկած, թագավորի երկու հազարանոց թիկնապահ հեծելագունդն էր։ Տրդատի շքախմբի թիվը հասել էր երեք հազարի այն բանից հետո, երբ արքայի հեծելագնդին միացել էին Ատրպատականի և Ադիաբենեի թագաժառանգներին ուղեկցողները և պարթև Վաղարշ I-ի Հռոմ ուղարկած պատգամավորները։

Խորենացին հաղորդում է, թե Արտաշեսը հայոց զորքերը բաժանեց չորս մասի և դրանք հաստատեց աշխարհագրական չորս ուղղություններով[86]։ Նշանակում է՝ Արտաշեսյանների օրոք Հայաստանում ստեղծված են եղել հատուկ սահմանապահ զորամասեր, երկրի սահմանները արտաքին հարձակումներից պաշտպանելու համար։ Այս հիմքի վրա էլ, հետագայում, Արշակունիների օրոք, Հայաստանում ստեղծվում են «կողմնակալ» իշխանությունները, որոնք գալիս են փոխարինելու նախկին բդեշխություններին[87]։

Պատերազմի դեպքում հայոց թագավորը հավաքում էր մեծաթիվ հետևակ զորք, որի թիվը կարող էր հասնել 100 հազարի[88]։ Արտաշեսյանների ժամանակ հայոց թագավորը, բացի հեծյալ թիկնապահ գնդից և մեծաթիվ հետևակից, ուներ նաև պատկառելի թիվ կազմող հեծյալ բանակ։ Թեև աղբյուրներում հայոց հեծելազորի ընդհանուր թվի մասին հիշատակում չկա, սակայն այլ տվյալներով հնարավոր է որոշել դրա մոտավոր քանակը։ Պլուտարքոսը հաղորդում է, թե Արտավազդը Կրասսոսին խոստացավ տրամադրել 10 հազար զրահապատ հեծելազոր և երեք բյուր հետևակ[89]։ Ենթադրելով, որ Արտավազդը Կրասսոսին կտրամադրեր ոչ թե իր ամբողջ զորքը, այլ, լավագույն դեպքում, դրա կեսը, ապա կարելի է ասել, որ նրա զրահապատ հեծելազորի թիվը, բացի թիկնապահներից, հասնում էր 20 հազարի։

Բացի հիմնական հեծյալ և հետևակ զորքերից, հայոց բանակում կային նաև օժանդակ զորամասեր։ Ստրաբոնը, խոսելով Տիգրանին հպատակ կորդվացիների մասին, նշում է, որ «նրանք համարվում էին աչքի ընկնող ճարտարապետներ և պաշարողական գործերին հմուտ։ Ուստի Տիգրանն օգտագործում էր նրանց այդպիսի գործերում»[40]։ Պլուտարքոսը, Տիգրանակերտի ճակատամարտը նկարագրելիս, խոսում է Տիգրանի բանակում եղած սակրավորների զորամասերի, ինչպես նաև մեծաքանակ գումակի մասին[41]։

Տիգրանի տերության մեջ ստեղծված ստրատեգոս-կառավարչի պաշտոնը, ինչպես վերը նշեցինք, պայմանավորված լինելով տերության սահմանների աննախընթաց ընդարձակումով, չէր կարող առաջանալ նախորդ ժամա-

---

86 Մովսես Խորենացի, Բ, ծդ։

87 Ս. Մ. Կրկյաշարյան. Բդեշխությունների առաջացումը Հայաստանում.—«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4։

88 Հայ ժողովրդի պատմություն. հ. Ա, Երևան, 1971, էջ 686։

89 Plutarch., Crass., XIX, 1—4.

40 Strabo, XVI, 1, 24.

41 Plutarch., Lucull., XXVI—XXVII.

նակներում, իսկ նվաճված երկրների կորուստով էլ, բնականաբար, պետք է վերանար։ Նախարարությունները Հայաստանում, որպես ժառանգական պաշտոններ, կարող էին առաջանալ ավելի ուշ, Արշակունիների օրոք։

Անտիկ հեղինակների մի շարք հաղորդումներում հիշատակված են Տիգրանի զորքերի տարբեր հրամանատարների անուններ։ Հետևաբար, ո՞չ Արտաշեսի, ո՞չ իսկ Տիգրանի ժամանակ դեռևս գոյություն չուներ հայոց սպարապետի ժառանգական պաշտոնը և սպարապետությունը չէր կազմավորված որպես նախարարություն։ Այն, որպես այդպիսին, կազմավորվեց Արշակունյաց օրոք, երբ Հայաստանում պետական պաշտոնները, որպես արքունի գործակալություններ, ժառանգաբար շնորհվեցին այս կամ այն նախարարական ընտանիքի ավագ անդամին։ Տիգրանի օրոք արքունի թիկնապահ գնդի հրամանատարն էր Մեհրուժանը։ Այս կարևոր պաշտոնը ևս այդ ժամանակ չէր կարող ժառանգական լինել, քանի որ Մեհրուժանը Սոփքի արքայական տոհմից էր, իսկ Սոփքը դեռ նոր էր միացվել թագավորությանը։ Հավանաբար Հայաստանում հայոց թագավորի զորախմբերը ցրված են եղել երկրի բերդերում և ամրոցներում։ Բերդապետը, որին վստահված է եղել այս կամ այն ռազմական կարևոր հանգույցի, ինչպես նաև արքունի գանձերի պաշտպանությունը, պատկանում էր արքային շրջապատող ամենահեղինակավոր և ազդեցիկ պաշտոնյաների թվին։

Հելլենիստական թագավորների պետական ապարատում խոշոր դեր խաղում էր նաև արքունի դպիրը, արքայի անձնական քարտուղարը։

Հելլենիստական բյուրոկրատական ապարատի կազմավորմանը զուգընթաց, Պտղոմեոսների և Սելևկյանների արքունիքում ստեղծվում է հատուկ դիվան, նամակագրի գլխավորությամբ։ Նամակագիրը բարձրաստիճան պաշտոնյա էր, որին թագավորը նշանակում էր իր մերձավոր ընկերների միջից[42]։ Այդպիսի բարձրաստիճան պաշտոնյայի ղեկավարած դիվանատունը կառավարման կարևորագույն մարմին էր։ Նույնպիսի դրություն էր նաև հելլենիստական մյուս երկրներում։ Աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ նամակներ, որ փոխանակել են հելլենիստական արքաները իրար միջև կամ ուղղել են հպատակ քաղաքներին և ստորադրյալ պաշտոնյաներին։

Երվանդունիները ու Արտաշեսն ունեցե՞լ են արդյոք իրենց նամակագիրը. դժվար է այդ հարցի որոշակի պատասխանը գտնել աղբյուրներում։ Սակայն մի շարք անուղղակի տվյալների հիման վրա կարելի է ենթադրել, որ Երվանդունիների և Արտաշեսյանների արքունիքում ևս կային հատուկ գրագիրներ։ Դեռևս Աքեմենյան տերության մեջ յուրաքանչյուր սատրապ ուներ առանձին դիվանատուն իր գրագիրներով[43]։ Անկասկած, Երվանդունի նախկին սատրապի հայոց թագավոր հռչակվելուց հետո, սատրապի ծառայության մեջ գտնված դիվանատունն իր գրագիրներով ու դպրապետով փոխարկվեց արքունի դիվանատան։ Նման դիվանատան գոյության օգտին վկայում են նաև Արտաշես I-ի արամեատառ և Արմավիրի, Գառնիի ու Ապարանի հունարեն արձանագրությունները, որոնց տեքստերը, ինչպես նշված է պատմագիտության մեջ, նախապես պիտի կազմված լինեին արքունի դիվանատանը[44]։ Հետագայում, հայ Արշակունյաց արքունիքում, արդեն հաստատապես եղել է դպրի պաշտոնը։ Ագաթանգեղոսը խոսում է հայոց թագավորի ատենակալ դպիրների մասին[45]։ Կորյունը և Խորենացին վկայում են, որ Մաշտոցն սկզբնական շրջանում եղել է դպիր արքունի դիվանում[46]։

---

[42] Polybii Historiae, XXX, 25, 16.

[43] Г. А. Тирацян. Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии.—«Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 106—109։

[44] К. В. Тревер. Очерки по истории культуры древней Армении. М.-Л., 1953, с. 181. Հայ ժողովրդի պատմություն. հ. Ա, Երևան, 1971, էջ 681։

[45] Ագաթանգեղոս, Ը, 99։

[46] Կորիւն. Պատմութիւն վարուց և մահուան Մեսրոպայ Վարդապետի. Վենետիկ, 1894, էջ 14։ Մովսես Խորենացի. Գ, ԽԷ։

Մ. թ. ա. IV—II դդ. Հայաստանում ևս գերագույն տերը թագավորն էր, իսկ քրմապետը՝ թագավորից հետո երկրորդ մարդը տերության մեջ։ Նշված հարաբերակցությունը պահպանվել է Երվանդունիների և Արտաշեսի ժամանակ, մինչև Տիգրան II-ի գահակալումը, որի ժամանակ արդեն քրմապետը պետք է կորցրած լիներ իր նախկին հեղինակությունը։ Խորենացին վկայում է, որ Տիգրանը «ցասուցեալ ընդ Վահունիսն... ընկենու զնոսա ի քրմութենէն»[47], իսկ Պլուտարքոսը, նկարագրելով Տիգրանի արքունի շքախումբը, գրում է. «Շատ թագավորներ սպասարկում են Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին որպես ուղեկիցներ և թիկնապահներ»[48]։

Եթե Խորենացու վկայությունը ուղղակի վերաբերում է Վահունիների շնորհազրկմանը, որոնց սերնդից էլ պետք է լիներ քրմապետը, երկրի երկրորդ անձնավորությունը, ապա Պլուտարքոսի վկայությունը չորս թագավորների մասին, կարելի է որպես անուղղակի ապացույցը համարել։ Յ. Մարկվարտը ենթադրում է, որ այդ չորս թագավորները պետք է լինեն Հայաստանի չորս բդեշխները[49], որոնք Հայաստանի պետական ապարատի աստիճանակարգության մեջ զբաղվում էին թագավորից հետո երկրորդ տեղը։ Ուստի քրմապետը, ինչքան էլ կարևոր դեր խաղար երկրի քաղաքական կյանքում, բդեշխությունների հաստատումից հետո այլևս չէր կարող երկրորդ մարդը լինել։

Բդեշխության պաշտոնը անցել է հարյուրամյակների զարգացման փուլ։ Բոլոր դեպքերում այն համապատասխան էր մնում նահանգապետի, կուսակալի պաշտոնին։ Յ. Մարկվարտի կարծիքով, բդեշխները Հայաստանում սահմանային մարզի կառավարիչներ էին[50]։ Ն. Ադոնցը բդեշխներին համարում է յուրատեսակ արքայիկներ, որոնք նախապես իշխել են ինքնուրույն առանձին երկրամասերում, բայց Տիգրանի նվաճումներից հետո ճանաչել են հայոց թագավորների գերիշխանությունը։ Նրանք համարվել են կուսակալներ համեմատաբար ուշ շրջանում, Սասանյան Պարսկաստանի պետական կարգի ազդեցությամբ[51]։

Հայաստանում բդեշխությունների առաջացման ժամանակը որոշելու համար առանձնապես արժեքավոր է Խորենացու վկայությունը, թե՝ Վաղարշակ թագավորը Հայաստանի ծայրամասերի կառավարումը հանձնում է բդեշխներին։ Ելնելով սրանից, հնարավոր կլիներ ենթադրել, որ բդեշխություններն առաջացել են Հայաստանում մ. թ. ա. II դարի կեսերին։ Մյուս կողմից, եթե ընդունենք Մարկվարտի ենթադրությունը, թե Պլուտարքոսի հիշատակած չորս թագավորները նույն այդ բդեշխներն են, ապա ճիշտ կլինի ենթադրել, որ բդեշխություններն առաջացել են Հայաստանում Տիգրանի թագավորության տարիներին. մի բան, որը միանգամայն, եթե ոչ բացառապես, հնարավոր էր այդ տարիներին ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում։

Մինչև Տիգրանի գահակալումը, հայոց թագավորության աշխարհագրական նեղ սահմանները չէին նպաստում բդեշխությունների առաջացմանը, քանի որ բդեշխությունն ինքնին մի փոքր թագավորություն էր, իսկ բդեշխը՝ թագավոր։ Դրությունն էապես փոխվում է Տիգրանի գահակալության առաջին տասնամյակում իսկ, երբ հայկական թագավորության սահմանները մեծապես ընդարձակվեցին, ընդգրկելով մի շարք նախկինում ինքնուրույն թագավորություններ, որոնց նախկին տիրակալները, հպատակվելով նոր աշխարհակալին, դառնում են նրա հպատակ զինակիցները։

---

47 Մովսես Խորենացի, Բ, ժդ։

48 Plut., Lucull., XXI. 6.

49 J. Markwart. Op. cit., S. 171—173.

50 Նույն տեղում, էջ 163—173։

51 Н. Адонц. Указ. соч., с. 283.

Այդ պայմաններում էլ հնարավորություն է ստեղծվում հայոց թագավորի համար յուրացնել «արքայից արքա» տիտղոսը։ Հայոց թագավորի այս նոր տիտղոսը հետևանք էր ոչ այնքան պարթևների դեմ նրա տարած հաղթանակի, որքան փաստական այն դրության, երբ Տիգրանի գերիշխանության տակ էին գտնվում արդեն մի շարք երկրների թագավորներ։ Հետագա շրջանում, երբ արդեն քաղաքական աննպաստ հանգամանքների բերումով հայերը կորցրին Տիգրանի նվաճած այդ երկրամասերը, բդեշխները, կորցնելով հայոց «արքայից արքային» հպատակ թագավորի բնույթը, աստիճանաբար վերածվեցին թագավորության շրջ ծայրամասերում նրա նշանակած կուսակալ-կողմնակալների։ V դարի մեր մատենագիրները բդեշխներին գիտեն՝ որպես «սահմանակալ», «գահերէց», «բարձերէց» իշխաններ[52]։

Ի դեպ՝ «գահերէց» և «բարձերէց» տերմինների մասին։

Հոմանիշ այս բառերը բնորոշում են բդեշխների սոցիալական դիրքը Հայաստանում Արշակունյաց թագավորության օրոք։ Ուսումնասիրողները, ելնելով «գահ» և «բարձ» բառերի՝ նստելու տեղ, բազմոց նշանակությունից, գտել են, որ դրանք մատենագրության մեջ գործածվել են «նշանակելու համար այն տեղը, բազմոցը, որ նախարարները գրավում էին թագավորի սեղանի շուրջը խնջույքների ժամանակ։ Այս տեղերը ճշտիվ սահմանված էին... և նրանցով որոշվում էր նախարարներից յուրաքանչյուրի ավագության կարգը»[53]։

Յարդ պատշաճ ուշադրություն չեն դարձրել այն փաստի վրա, որ «գահերէց» բառը Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում արտահայտված է τιμιώτατος (պատվավորագույն) բառով։ Այն ճիշտ հասկանալու համար վերադառնանք Սելևկյանների արքունիք, որտեղ պետական գործերում խոշոր դեր էին խաղում թագավորի ընկերները (φίλοι)։ Աղբյուրներում հաճախ հիշատակվող թագավորի այս ընկերները կրել են տարբեր պատվատիտղոսներ՝ թագավորի հետ ունեցած իրենց մոտիկության համապատասխան։ Սելևկյան տերության մեջ սովորական ընկերների կողքին կային նաև առաջին ընկերներ, որոնցից մեկը բժշկապետ էր, մյուսը՝ թագուհու ննջարանի վերակացու։ Եղել է նաև պատվավոր ընկերների (των τιμωμένων φίλων) աստիճանը։ Գահերեց բդեշխներին Ագաթանգեղոսի հունարեն տարբերակը տալիս է τιμιώτατοι (պատվավորագույններ) տիտղոսը, որը բդեշխներին տարբերում էր հայոց թագավորի մյուս մերձավորներից ու ենթականերից։ Եթե Սելևկյան արքունիքում հանդիպող «պատվավոր» տիտղոսը իրոք առնչվում է հայ իրականության մեջ բդեշխներին տրված «պատվավորագույն» տիտղոսին, ապա հաստատ կարելի է ասել, որ «գահերէց» բառում «գահը» օգտագործված է ոչ այնքան «նստելու տեղ, բազմոց» իմաստով, որքան «պատիվ» նշանակությամբ։

Արտաշեսյան Հայաստանի պետական մի շարք հաստատություններ թեև իրենց վրա կրել են հելլենիստական շրջապատի ազդեցությունը, այսուհանդերձ, ունեցել են տեղական առավել հին արմատներ և կրել են «ազգային» ավանդությունների կնիքը։ Այդ պարզորոշ երևում է Հայաստանում բդեշխությունների ծագման և դրանց հետագա գոյության մասին ամբողջ պատմությունից։ Դրանք առաջացել են Տիգրան II-ի նվաճումներից հետո, որպես հայոց թագավորի գերագույն իշխանությանը ենթակա երկրամասեր։ Եթե դրանց ծագումը խորթ երևույթ լիներ Հայաստանի ներքին զարգացման համար, ապա այդ երկրամասերի կորստից հետո բդեշխությունները պետք է վերանային Հայաստանում։ Մինչդեռ դրանք հիշատակվում են մեր մատենա-

---

52 Փավստոս Բուզանդ, Գ, Թ Դ, ծ։ Ագաթանգեղոս, ՃԻԶ, 873։

53 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածութ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի. Երևան, 1940, էջ 282—283, ծան. 128։ Հմմտ. նաև Н. Адонц. Указ. соч., с. 2°3.

գրության մեջ մինչև հայկական թագավորության անկումը։ Եվս մի փաստարկ այն մասին, թե բդեշխությունների առաջացումը Հայաստանում կապ չուներ հելլենիզմի ազդեցության հետ, հավանաբար, այն է, որ Պլուտարքոսը, չկարողանալով ճիշտ ընորոշել հելլենիստական աշխարհին խորթ այդ հաստատությունը, բդեշխությունների տիրակալներին անվանում է թագավորներ։

Ամփոփելով բդեշխությունների մասին մեր ասածը, կարելի է ուրվագծել հետևյալ պատկերը։ Դեռ վաղ հայկական ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում եղել են երկրամասերի իշխաններ։ Բայց նրանց մասին մենք հավաստի տեղեկություններ ունենք սկսած Արտաշեսյան թագավորության ժամանակից, երբ Հայաստանը, դառնալով Առաջավոր Ասիայի հզոր տերությունններից մեկը, վարչականորեն բաժանվում է մի շարք միավորների, հայոց թագավորին ենթակա կուսակալ-կառավարիչների գլխավորությամբ, որոնք հայտնի են բդեշխ անունով, իսկ հույն հեղինակները նրանց համարում են հայոց թագավորին ենթակա բասիլևս-արքայիկներ։ Բդեշխությունները ձևավորվել են Տիգրան II-ի ժամանակ, երբ հայոց թագավորության սահմանները դուրս եկան Հայկական լեռնաշխարհի բնական-աշխարհագրական սահմաններից, դրանով իսկ ստեղծվեցին նյութական պայմաններ բդեշխությունների առաջացման համար։ Բդեշխները, որպես գահերեց և բարձրեց իշխաններ, թագավորի մերձավորագույն և հզորագույն զինակիցներն էին։ Սկզբնական շրջանում բդեշխության պաշտոնը ժառանգական չի եղել, այլ թագավորն այն շնորհել է իր մերձավորներից որևէ մեկին, իրեն մատուցած որոշակի ծառայության դիմաց։ Ավելի ուշ, Հայաստանում ավատատիրական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց, բդեշխները դառնում են ժառանգական պաշտոնյաներ, որպիսի վիճակն էլ արձանագրված ենք գտնում մեր մատյաններում։

Վերջում երկու խոսք լիտուրգիա կոչված երևույթի մասին։

Իր մատյանի Բ գրքի Է-ը գլուխները պատմահայրը հատկացրել է Հայաստանում նախարարությունները կարգավորելու ուղղությամբ Վաղարշակ թագավորի ձեռնարկած միջոցառումներին։ Նրա պատմածից կարելի է եզրակացնել, որ սկզբնական փուլում յուրաքանչյուր նախարար կապված է եղել արքունի որևէ պաշտոնի, ծառայության հետ, որը աղբյուրներում կոչված է «գործակալություն»[54]։ Ն. Ադոնցը իրավացիորեն գործակալությունը համարում է ծառայություն, այն անջատելով իշխանությունից[55]։ Եթե գործակալությունը ծառայություն է, ապա այդ երևույթի զուգահեռը մենք գտնում ենք նաև հելլենիստական աշխարհում, որտեղ պետական ծառայությունը կոչվել է լիտուրգիա, իսկ այդ ծառայությունը տանող անձնավորությունը՝ լիտուրգոս։ Ջենք կասկածում, որ առաջին դարի Հայաստանում ևս պետական ծառայությունը համարվել է լիտուրգիա։ Դրա ապացույցը տեսնում ենք Գառնիի հունարեն արձանագրության մեջ, որտեղ հանդիպում է λειτουργός բառը։ Հունական աշխարհում այս բառով արտահայտվում էր այն ծառայությունը, որ պոլիսում իր իսկ միջոցներով կատարում էր որևէ ունևոր քաղաքացի, քաղաքային համայնքի կամ պետության օգտին։ Ուստի պիտի ճիշտ համարել Կ. Վ. Տրեվերի և Գ. Խ. Սարգսյանի տեսակետը, որոնք Գառնիի արձանագրության լիտուրգոս բառը համարում են արտահայտություն այն բանի, որ հելլենիստական Հայաստան մուտք էր գործել լիտուրգիայի ինստիտուտը[56]։

Լիտուրգիայի ինստիտուտը ժամանակի ընթացքում, պետական կարգերի փոփոխմանը զուգընթաց, կրել է որոշ փոփոխություններ։ Եթե Հունաստա-

---

54 Փավստոս Բուզանդ, Դ, բ։ ե, գ։ ե, լ։

55 Н. Адонц. Указ. соч., с. 444.

56 К. В. Тревер. Указ. соч., с. 183—185. Գ. Խ. Սարգսյան. Գառնիի հունարեն արձանագրության շուրջը.—ՀԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3, էջ 55—56։

նի պատմության դասական կոչված փուլում, երբ պետական կազմակերպության հիմնական ձևը պոլիսն էր, քաղաք-պետությունը, լիտուրգիայի պարտականությունները համայնքի որոշմամբ դրվում էին որևէ հարուստ քաղաքացու վրա, ապա հաջորդ շրջանում, երբ պետական կազմակերպության հիմնական ձևը դարձավ հելլենիստական միապետությունը, արդեն թագավորն ինքը այս կամ այն ծառայությունը, լիտուրգիան, հանձնարարում էր այս կամ այն մարդուն։

Լիտուրգիայի ինստիտուտի Հայաստան թափանցելու առաջին փաստը պիտի տեսնել Պլուտարքոսի հետաքրքիր մի հաղորդման մեջ։ Նկարագրելով Տիգրան II-ի ժամանակ Տիգրանակերտի կառուցումը, նա գրում է, որ «ինչպես քաղաքի հասարակ մարդիկ, այնպես էլ իշխանավորները, թագավորին հաճոյանալու նպատակով, իրար հետ մրցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման համար»[67]։ Հայաստանում լիտուրգիայի ինստիտուտի հետագա արմատավորման փաստ չէ՞ արդյոք Գառնիի բաղնիքի խճանկար հատակի կենտրոնական մակագրությունը, որտեղ ասված է. μηδὲν λαβόντες ἠργασάμεθα — «Ոչինչ չստանալով աշխատեցինք»։

Լիտուրգիան, մուտք գործելով Հայաստան, տեղական պայմանների, ինչպես նաև տեղական համանման ինստիտուտների ազդեցությամբ, ստացել է տեղական բնույթ, որն արտահայտվել է թագավորին ծառայելու եղանակով։ Հետևաբար, լիտուրգիան հայ իրականության մեջ կարող էր ստանալ թագավորի հանձնարարությամբ հօգուտ պետության կատարվող ծառայության բնույթ։ Ասվեց, որ հայոց թագավորը ազնվականության այս կամ այն ներկայացուցչին հանձնարարում էր այս կամ այն ծառայությունը, որը կոչվում էր «գործակալութիւն», իսկ պաշտոն ստացողը՝ «գործակալ»։ Մեր կարծիքով, հունարեն լիտուրգոս և լիտուրգիա տերմինների բովանդակությունն, այս դեպքում, ուղղակի նույնանում է հայերեն «գործակալ» և «գործակալութիւն» տերմինների բովանդակությանը[68]։

ОБРАЗОВАНИЕ И ДАЛЬНЕЙШЕЕ РАЗВИТИЕ ГОСУДАРСТВЕННОГО АППАРАТА В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Доктор ист. наук С. М. КРКЯШАРЯН

Резюме

Процесс образования и развития государственного аппарата в древней Армении можно разделить на три этапа: 1. Внутренняя консолидация и формирование (IV—нач. I в. до н. э.); 2. Внешнее распространение и внутреннее усовершенствование (I в. до н. э.—I в. н. э.); 3. Перерастание эллинистического рабовладельческого государственного аппарата в феодальный (I—V вв.). Первый этап завершается царствованием Арташеса I (189—160 до н. э.). Создавая свой государственный аппарат, бывший стратег Селевкидов Арташес должен был иметь в виду государственные учреждения Селевкидов. Однако он должен был считаться и с создавшимися в Армении конкретными условиями, которые отличались от таковых в государстве Селевкидов. Можно отметить два различия: 1. Географические пределы армянского царства были более узкими, чем у Селевкидов, 2. Селевкидская держава не имела той этнической компактности, которой достигла «одноязычная» Армения. Когда под властью

---

67 Plut., Lucull., XXVI.

68 Այս մասին հանգամանորեն տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան. Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 235—238։

Тиграна II оказались цари нескольких стран, он присвоил себе титул «царя царей». Управление частью завоеванных стран Тигран оставил в руках бывших царей этих стран. В других же странах он, по примеру Селевкидов, назначил правителями своих приближенных. Главнокомандующим войск являлся сам царь, однако, не во всех походах он лично возглавлял войска. При Арташесидах в Армении были созданы пограничные военные части для защиты страны. На этой же основе позднее формируются пограничные княжества, заменившие прежние бдешхства. До царствования Тиграна II, верховный жрец являлся вторым после царя лицом в Армении, а позже на первый план выдвинулись бдешхи, один из которых становится вторым после царя лицом. При Арташесидах должность пахараров не была наследственной; она стала такой позднее, при Аршакидах, когда ведомственные должности превратились в наследственные нахарарства.